

618Д

9-13


Հ Ա Ս Հ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ա Տ

ՊՐՈՖ. Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԾԾԿԵՐ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ
Ա Մ Ա Ռ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ծ Ի Ց

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿ ՎՐԱ Ք Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ա Տ
ՅԵՐԵՎԱՆ

1937



Հ Խ Ս Հ Տ Ա Ժ Պ Ա Հ Ա Մ Ա Յ Ա

ՊՐՈՖ. Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

613.953

Գ-Բ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԾԾԿԵՐ
ՑԵՐԵԽԱՆԵՐԻՆ
Ա.Մ.Ա.Ռ.Ա.Ց.Ի.Ն ԼՈՒԾԻՑ



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ ԶՈՒԹՅՈՒՆ
ԵԵԲՎԱՆ

1937

Պատ. խմբ. քՃ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխ. խմբ. Հ. ԿԱՐՄԱՊԵՏՅԱՆ
Մրգագիշ Ա. ԱՐՁԱՐԱՆՅԱՆ

Դրավ. լիազոր Ա. 1188
Պատվեր 1316, տիրած 2000.
Հրատ. 8922

Հանձնված ե արտադրության 1 նոյեմբերի 1936 թ.
Ստորագրված ե տպագրելու 2 դեկտեմբերի 1936 թ.
Գետհրատի տպարան, Յերևան, Ա. ԳԱՆՈՒՆՅԱՆցի, 4

ԻՆՉՈՒ ՅԵՆ ԾԾԿԵՐ ՑԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԱՃԱԽ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ

Ծծկեր յիրհիսան քնքույշ ե, անկայուն, նրա
որդանիզմի դիմադրողականությունն աննշան ե. նրա
որդանների փունկցիաները յենթակա լեն արագ և
բուռն փոփոխությունների: Փոփոխություններ կրում
են նրա բոլոր որդանները:

Մաշկն արագ խոցվում ե: Անմաքրությունը,
անհարմար ու կոշտ հագուստը նրա վրա առաջացնում ե
ցաներ, թեփոտում, մարմաջ, քոր, թարախային բոր-
բոքումներ (կայծոփկներ —ֆորոնկլա):

Այդպես են նաև բերանի և շնչական ուղիների
լորձաթաղանթները:

Յեթե մանուկն ապրում ե վատ ողում, ապա նրա
դիմադրողականությունը նվազում ե, բերանում կաթ-
նախտ ե (МОЛОЧНИЦА) առաջանում: Յեթե նրա ձեռ-
քերը մաքուր չեն, լեթե նա կեղտոտ իրեր ե դնում
բերանը, ապա նրա բերանի լորձաթաղանթի վրա
սկսվում են զանազան տեսակի այլ բորբոքում-
ներ, որինակ, ափտային, խոցային բորբոքումներ,
վորոնք առաջացնում են տաքություն, առատ թքա-
հոսություն, ցավեր ծծելու և խմելու ժամանակ:

Յեթե ձձկերի շրջապատում դրիպով հիվանդ կա,

ապա ամենից շուտ ծծկերն եւ վարակվում։ Յեթե նա
չի սովորել մաքուր, թեկուղ և ցուրտ ոդի, յեթե համա-
պատասխան հագուստ չլինելու պատճառով նրա մաշկը
չի ընտելացել արտաքին ջերմության փոփոխու-
թյուններին, այդ դեպքում անենաաննշան քամուց նա
«մըսում», հիվանդանում եւ։

Յեթե ծծկերը հիվանդանում եւ շնչական ուղիների
վերին մասերի՝ քթի, ըմպանի, կոկորդի կատառով,
այդ դեպքում այդ կատառն արագորեն տարածվում եւ
դեպի ցած, հասնում եւ բրոնքներին և բարդանալով
թոքերի բորբոքում եւ առաջացնում։ Թոքերի բորբա-
քումը ծծկերների լուրջ հիվանդություններից մեկն եւ.
նա տալիս եւ ահոելի մահացություն։

Զգայուն են վոչ միայն ծծկերի մաշկը, նրա
շնչական ուղիների լորձաթաղանթները, այլև նրա ներ-
վային սիստեմը, առանձնապես ուղեղի թաղանթները,
վորոնց բորբոքումը մենինդիտ եւ կոչում։

Ծծկերները հաճախ են հիվանդանում մենինդի-
տով։ Յեթե նրանց մեջ արդեն տուբերկուլոզային վա-
րակ կա, ապա վերջինս շատ դեպքերում, յերբ խախտ-
վում եւ ծծկերի որգանիզմի հավասարակշռությունը,
տարածվում եւ, հասնում թաղանթներին և տուբեր-
կուլոզային մենինդիտ եւ առաջացնում, այսինքն մի
հիվանդություն, վորից վոչ մի փրկություն չկա, միշտ
եւ վերջանում եւ մահով։

Կա և մենենդիտի մի այլ տեսակ՝ համաճարա-
կային մինինդիտ, վորի հարուցիչներն են մենինդո-
կոկերը. դա տարափոխիկ հիվանդություն եւ։ Յեթե
քաղաքում կամ շրջանում առաջացել եւ համաճարա-
կային մենինդիտ, այդ դեպքում մեծ թվով ծծկեր

յերեխաներ են հիվանդանում, կազմելով հիվանդացածների թվի՝ $20^0/0$ — $40^0/0$ —ը:

ԻՆՉՈՐԻ ՅԵՆ ԾԾԿԵՐՆԵՐՆ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՅԵՆԹԱԿԱ ԼՈՒԾԻ

Ինչպես յերեխալի մաշկը, շնչական ուղիղները, ուղեղի թաղանթներն են յենթակա արագ հիվանդացման, այնպես ել՝ շնորհիվ ծծկերի որդանիզմի քնքշության, անկատարության և արագ խոցելիության, շուտ հիվանդանում են նուև նրանց մարսողական ուղիների լորձաթաղանթները:

Ծծկերի որդանիզմի այդ ընդհանուր անատոմո—ֆիզիոլոգիկ հատկությունն առանձնապես նկատելի յե ծծկերի մարսողական ուղիների նկատմամբ: Այդ բացատրվում է նրանով, վոր ծծկեր հասակում նրա մարսողական ուղիներն ունեն ուրույն, հասակին հատուկ առանձնահատկություններ: Այս շրջանում ծծկերը ամենախնտենուիլ աճն ե ունենում: Նրա աճը մի տարում յեռապատկվում ե. յերեխալի հասակն առաջին տարում աճում է 20—25 սանտիմետր: Այդպիսի բուռն աճը պահանջում է մարսողության բուռն տեմպ, նյութերի փոխանակության ուժեղ թափ, մարսողական ուղիների լոձրաթաղանթների, նրանց վրա գտնվող գեղձերի լարված և ինտենսիվ աշխատանք, վորպեսզի որդանները և նյուսվածքներն արագ կառուցվեն, վորպեսզի ամբողջ որդանիզմի աճումը կանոնավոր լինի:

Այդ հասակում սննդի պահանջը շատ մեծ է լինում: Սննդից մարսողության ուղիներում շինանյութեր են պատրաստվում որդանների ու հյուսվածքների կառուցման համար:

Վորքան ավելի փոքր եւ մանուկը, այնքան ավելի
մեծ եւ նրա սննդի կալորիաների պահանջը: Այսպես՝
առաջին յերեք ամիսը յերեխան իր քաշի յուրաքան-
չյուր մեկ կիլոյի համար 130—140 կալորիայի պահանջ
ունի, յերկրորդ յեռամսյակում՝ 120—90, յերրորդում՝
110—80, չորրորդում՝ 90—70: Ուրեմն պարզ եւ հետեւ-
յալը. վորքան ավելի փոքր եւ յերեխան, այնքան
ավելի մեծ եւ նրա ստամոքսա—աղիքային տրակտի
աշխատանքը, այնքան ավելի ինտենսիվ եւ սննդի յու-
րացման պրոցեսը, այնքան ավելի յեւ քայլքայման
պրոցեսը: Պարզ եւ այն, վոր յեթե մի որգան, մի
հյուսվածք աշխատում եւ մեծ լարումով, ապա նա
ավելի հաճախ առիթներ ունի վնասվելու, խոցվեռու,
վորչափնրա կյանքի կանոնավոր պոյմանները խախտ-
վում են, վորչափներկա գեղքում նրա սննդացման
մեջ թերություններ, սխալներ են տեղի ունենում:

Այսպես ուրեմն, մի կողմից՝ ծձկերի անառո-
մո—ֆիզիոլոգիկ առանձնահատկությունները, մյուս
կողմից՝ նրա բացառիկ աճը պատրաստի հող են ներ-
կայացնում, վոր այդ հասակում մարսողության սննդա-
ռության խանգարումները դառնան հաճախակի յիրե-
վույթ, վոր խիստ բնորոշ եւ ծձկեր յերեխայի ախ-
արանության (պաթոլոգիա) համար:

ՀՈՒԾԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԾԾԿԵՐՆԵՐԻ ՀԱՍԱԿՈՒՄ

Մարսողության և սննդան խանգարումները՝ լուծը
տեղի յեւ ունենում ամբողջ տարվա ընթացքում: լուծն
ամառվա տաք ամիսներին առանձնապես զգալի չա-

փերի յե հասնում յեզ այդ պատճառով այդ հասակի լուծը ամառային լուծ ե կոչվում:

Լուծը ծձկեր հասակում կաղմում ե ծծկերների հիմանդրությունների 40 տոկոսը: Մահացությունն ամառային լուծից խոշոր ե. ընդհանուր առմամբ յերեք—չորս մեռած ծծկերներից մեկը մահանում ե լուծից:

Այս թվերը բավական պերճախոս են և ցույց են տալիս, վոր յերեխաների մահացության դգալի մասն առաջանում ե լուծից: Այստեղից բղում ե այն հետևությունը, վոր յերեխաների մահացության դեմ պայքարելու համար նախ և առաջ պետք ե պայքարել նրանց մարսողության ուղիների խանգարումների դեմ:

Իսկ լուծի դեմ պայքարելու համար պետք ե միջոցներ ձեռք առնել՝ նախ և առաջ լուծ առաջացնող պատճառները վերացնելու համար:

ՀՈՒԾԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Լուծի պատճառները բազմազան են: Նրանք կարող են լինել մեկ և ավելի. գլխավոր տեղը բռնում են սննդի հետ կտաված պատճառնը: Մննդի վորակն ու քանակը այս դեպքում ահագին դիր ե կատարում: Խոշոր նշանակություն ունի այն, թե վորչափ համապատասխան սնունդ ե ստանում յերեխան, վորքան եներգիա և մարսողակուն ուղիների լարում ե նա պահանջում յերեխայից:

Կարեոր նշանակություն ունի և այն հանգամանքը, թե վարակլմծ ե արդյոք սնունդը և թնջ վարակով:

Նմա ապես նշանակություն ունի նաև այն վիճակը, վորի մեջ յերեխան գտնվում ե ներկա մռմեն-

տում: Պետք ե հաշվի առնելայն, թե վորպիսի կազմը՝ վածք ունի յերեխան, վորպիսի կոնստիտուցիա ունի, արդյոք որգանիզմն ամսւը ե թե թույլ, թուլացած չՅ արդյոք նա նոր անցրած հիվանդություններից. կամ թե ի ծնե տկար չՅ նա, թերասուն, փոքր գիմազրուղականությամբ ոժտված:

Այսուհետև կարեոր ե նշել և մի այլ հանգամանք, վորի վերացումը կատարելապես մեր ձեռքին ե, կախված ե միայն աշխատավոր մասսաների կուլտուր—կանցաղային մակարդակից: Դա խնամքի թերություններն են վորոնք ահազին բացասական դերն կատարում ծծկերնների ամառային լուծի ծագմանու զարգացման մեջ:

Վատ կամ թերի խնամքը կարող է լուծի իսկական պատճառ լինել և թուլացնել մանկան, քայքայել նրա առողջությունը, նախատրամադրելու նախապատրաստել նրան զանազան հիվանդությունների համար:

Խնամքի հիշյալ թերությունների վրա անհրաժեշտ ե սրել ընթերցողի ուշազբությունը:

Վորոնք են այդ թերություններից գլխավորները:

Տաք հագուստն ամառվա ամիսներին գերջերմացնում է յերեխային, իսկ գերջերմացումն առաջացնում ե նրա մեջ հիվանդագին կացություն, առաջ ե բերում մարսողական ուղիների լորձաթաղանթների և մարսողական գեղձերի ֆունկցիաների խանգարում—դեպքեսիա:

Բնակարանային անբավարար ողափոխությունն ու մաքուր ողի ողազործման բացակայությունը նույնպես վատառողջ աղջեցություն են ունենում ծծկեր յերեխայի վրա. յերեխան թուլանում ե, նրա

ախորժակը կորչում ե, ժրությունը պակասում, ժայխը
ժարում ե:

Ամառային տոթը հասակավորների վրա ել ե
աղդում և ամենքս այդ զիտենք: Բայց մանուկների
վրա այդ աղդեցությունը չտփազանց մեծ ե:

Արեի կիզիչ ճառագայթները նրանց մեջ արա-
գորեն առաջացնում են գերջերմություն, վորից նրանց
մեջ կարող են առաջանալ, անգամ՝ ցնցումներ և լուծ:

Խնամքի թերությունների շարքին են պատկանում
նաև ջրային մանիստուլիստիանների սակավությունը,
զորի անմաքրությունը: Նրանք, ովքեր ամառային
ամիսներին յերեխաններին չեն լողացնում, ջրով չեն
շփում նրա մարմինը, նրան կեղտոտ շոր են հագցնում,
ապա նրանք անգիտակցորեն, անգիտաբար վտանգում
են յերեխայի առողջությունը, վորովհետեւ այդ բոլոր
թերությունների հետևանքով նվազում ե մարսեցնող
հյութերի արտադրությունը մարսողական տրակտի
գեղձերում, իսկ այդ պատճառ և դառնում այն բանի,
վոր որդանիղմի բջիջները կանոնավոր կերպով չեն
կարողանում յուրացնել սնունդը և այդպիսով լուծ ե
առաջանում:

Առանձին հիշատակության արժանի յե մի այլ
թերություն, շատ մարդիկ կարծում են՝ վոր փոքրիկ
յերեխային ջուր չպետք ե տալ, վոր նա ջրի կարիք
չունի: Պետք ե ասել, վոր դա մեր տխուր անցյալի
ժառանգությունն ե, մի սխալ ե և վնասակար սխալ:

Մանուկներն ել մեզ նման ջրի կարիք ունեն:
Ջրի կարիք ունի նաև նորածինը ԶԵ վոր նորածնի
և առհասարակ յերեխանների մեջ նյութերի փոխանա-
կությունն առանձնապես արագ ե կատարվում, չԵ վոր

յերեխան մեծերի նման ջուր և արտազատում յերի-
կամներով և մազկի միջոցով։ Յեվ ահա հեղուկի ալբ-
պակասը, այդ ծարավը պետք և հագեցնել ջրով, թեզով։
Նորածինները հարավային յերկրներում, ինչպիսին ե-
և Հայաստանը, տառապում են մի հիվանդությամբ,
վորն անցողիկ ջերմ և կոչվում։ յերեխան տոթ որերին
ջերմում ե. բավական և նրան ջուր խմացնել, վոր տա-
քությունն իջնի. բավական և նրան սիստեմատիկորեն
ջուր տալ, վորպեսզի նա չտառապի «անցողիկ ջերմով»։

ԼՈՒԾԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԾԾԿԵՐՆԵՐԻ ՄԵՋ

Ծծկերները տառապում են գլխավորապես յերեք
ձեի լուծով, հասարակ լուծ (հասարակ դիսպեսիսիա),
թունավոր լուծ (տոքսիկ դիսպեսիսիա), վորը հայտնի
և նաև հին անուններով ստամոքսի և աղիքների կա-
տառ, ձանկական խոլերա, կամ խոլերինա և արնաւ-
թարախայրն լուծ՝ դիղենտերիա, կոլիտ)։

Այն բոլոր ֆակտորները, վորոնք հիշեցվեցին-
վերեւում, այն ե՛ անկանոն սնունդ, վարակում, խնամ-
քի թերություն, կոնստիտուցիայի առանձնահատ-
կություններ, կարող են առանձին-առանձին կամ
զուգորդված ձեռվ—սնունդ և վարակում, սնունդ և
կոնստիտուցիա — այս կամ այն տեսակի լուծ առա-
ջացնել։

ՀԱ.ՍՍ.ՐԱ.Կ ԼՈՒԾ (ՀԱ.ՍՍ.ՐԱ.Կ ԴԻՍՊԵՊՍԻԱ.)

Այս հիվանդությունն առաջանում է կամ հան-
կարծակի, կամ հետզհետեւ։ Ուտելուց հետո յերե-
խան փոխում եւ Վորոշ յերեխաններ հաճախ են փոխում,

մյուսները մերթ լնդ մերթ. կումը տիպիկ, դիսպեպ-
տիկ ե, որական 6 – 10 անգում:

Կղանքը լինում ե ջրիկ, կանաչ գույնի, թթու
հոտով, թթու ուշակցիայով և լորձ ե պարունակում:
Այնուհետեւ նկատվում է սաստիկ գաղարտաղբություն,
փորը զոռում ե. յերեխան անհանգիստ ե, հաճախ ե
լալիս, շուտ-շուտ արթնանում ե: Բայց ընդհանուր
վիճակը համարյա անփոփոխ ե. գիտակցությունը
պայծառ ե, հայացքը՝ պարզ, կենդանի, շրջապատով
հետաքրքրվում ե. յեթե յերեխայի հետ խաղում են
նա զբաղվում ե:

Քաշը տատանվում ե, կարող ե պակասել, լեղվի
վրա կաթնախտ կարող ե լինել, վորովայնը քիչ
փքված, շոշափելիս՝ ցավ ե զգում:

Սովորաբար հասարակ լուծը, դիսպեպսիան բա-
րենթաց ե լինում, բավական ե դիետա նշանակել
(մանավանդ միայն մայրական կաթով սնվողին), հան-
գիստ տալ մարսողական տրակտին, նվազեցնելով կաթի
քանակը և ջուր տալ հաճախակի, վորպեսդի կարճ
ժամանակից հետո մանուկը կազզուրվի և իր առողջ
տեսքն ընդունի՝ ցավերն անհետանան, գաղերը պա-
կասեն, կղումը սկսի կանոնավորվել և կղանքի գույնը
կանաչից փոխվի վոսկեգույնի:

Ուրիշ բան ե, յերբ հիվանդն արհեստականորեն
սնվող ե, յերբ նա զուրկ ե այնպիսի հարազատ և
անբասիր սննդից, վորպիսին կնոջ կաթն ե, վորը
յերեխային և սնուցում ե և զինում պաշտպանողական
նյութերով հանդեպ զանազան ինֆեկցիաների, հիվան-
դությունների: Այս գեպքում զրությունն ավելի լուրջ

ե, վորովհետև յերեխան թերասուն ե լինում, քաշը շատ պակառ, ուրեմն և ուժերը թուզը

Այսպիսի մանկան վրա սովորաբար հասարակ լուծը անհամեմատ ավելի մեծ աղղեցություն ե ունենում: Թեև հասարակ լուծն ընդհանրապես բարենպաստ վախճան ե ունենում, սակայն նա վորոշ դեպքերում, մանավանդ արհեստականորեն սնվողների մոտ կարող ե փոխանցվել ավելի ծանր տեսակի, թունավոր լուծի:

ԹՈՒՆԱՎՈՐ ԼՈՒԾ (ՏԻՍԽԻԼ ԴԻՍՊԵՎԱԽԻԱ)

Ամենախնականական նշաններն են փսխումն ու լուծը: Յերեխան փսխում ե վոչ միայն ուտելուց, խմելուց հետո, այլ անոթի ժամանակ. յերեխան այս դեպքում շարունակ կամ շատ հաճախ վորձկում ե:

Կղումն սկզբում լինում ե այնպես, ինչպես հասարակ լուծի ժամանակ, բայց հետո հանկարծ դառնում ե հաճախակի, որական մինչև 20—30 անգամ. կղանքն ել լինում ե ջրիկ, դեղնականաչավուն, լորձախառն:

Հաճախակի կղումը շուտով ջրադրկում ե առաջ բերում, յերեխայի քաշը սաստիկ պակասում ե, յերբեմն 2—3 որում կորցնում ե մինչև 2000 գրամ: Յերեխայի մաշկը չորանում ե, ճկունությունը կորցնում, կնճռությում Փ, ներս ցցվում, մկանները ձգվում են, ծանր դեպքերում մաշկը պնդանում ե. յեթե մաշկը սեղմում են, ապա յերկար ժամանակ սեղմած տեղում փոս ե մնում:

Կարեռագույն նշանները ներվալին սիստեմի կողմից են, յերեխայի հոգեկան աշխարհում. հիվանդի գիտակցությունը յերբեմն մթագնում ե, կամ միշտ

Ճթաղնած ել լինում, յերեխան չի հետաքրքրվում եր
սովորական շրջապատով. հայացքը պարզ չե, հառած
ե հեռուն, քիչ հետո գիտակցությունը կորչում ե.
յերեխան վոչ վոքի չի ճանաչում, վոչինչ չի նկատում.
գեմքը նման ե դիմակի, քիթը սրվում ե, աչքերը փոս
են ընկնում. մաշկը հողի գույն ե ստանում. յերեխան
անշարժ ընկած ե:

Յերբեմն լինում են ակամա շարժումներ՝ մատ-
ների, լեղվի, ծամիչ մկանների, այնուհետև ջղաձգու-
թյուններ են նկատվում: Շնչառությունը խորն ե,
առանց ընդհատումների: Պուլմն արագ ե, սրտի տոները՝
թույլ. առաջին տոնը յերբեմն անհետանում ե: Ծայ-
րանդամները սառում են և մանիշակի գույն ունեն:

Հաճախ տաքությունը բարձրանում է մինչև 40
աստիճանի: Արյունը թանձրանում ե, շաքարը շատա-
նում, մեղքը պակասում, յերբեմն չքանում և սպիտ
ու շաքար և պարունակում:

ԱՐՅՈՒՆԱԼՈՒԾ (կոլիս, դիզենտերիա)

Կարեռագույն ախտանիշը կղումն ե, վորը շատ
հաճախակի տեղի է ունենում մինչև 30 և ավելի ան-
գամ: Նքոցներ են նկատվում, կղանքի մեջ մեծ քա-
նակությամբ լորձ և լինում: Յերբեմն լորձի հետ
նկատվում ե արյան կետերով կամ շերտերով խառն
թարախ:

Յերբեմն նկատվում ե բարձր տաքություն և թու-
նավորման նշաններ, գիտակցության աստիճանական
փոփոխություններ՝ սկսած թեթև մթագնումից մինչև
կատարյալ վերացում, քաշի գգալի պակասում, արտա-
հալտված դժգունություն, պուլսի անկում, ծայր ան-

զամների սառնություն, վորովայնացավեր՝ նոովաներով, ախորժակի վատացում:

Ընթացքը տարբեր և լինում, նայած թե ինչ հարուցիչի հետ գործ ունենք. դիզենտերիական աճցորայի, թե պարատիֆային բացիլի, թե դիզենտերիկ մանրեների: Հիվանդության տեվլողությունն ել տարբեր և լինում. մի քանի որից մինչև 3—4 շաբաթ: Լուծը յերեմն յերկարածիկ (քրոնիկ) ձև և ընդունում, մերթ անցնում ե, մերթ վերսկսվում:

Արյունալուծի ժամանակ բորբոքումները տեղի յե ունենում հաստ աղիքներում: Հաստ աղիքների բորբոքումները միշտ ընդունակ են կրկնվելու, ոեցեգիվ տալու: Այդ կրկնումները տեղի յեն ունենում տարեցտարի, սովորաբար ամառվա ամիսներին:

Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ԼՈՒԾԸ

Լուծի դեմ կարելի յե պայքարել, այդ հիվանդությունը կարելի լե կանխել:

Այդ ապացուցում են վիճակագրական տվյալները. այնտեղ, վորտեղ, ծծկեր յերեխայի մահացությունը մեծ չե, ստամոքսա-աղիքային հիվանդություններն առաջնակարգ դեր չեն խաղում, այնտեղ մահացության ֆակտորների թվում առաջին տեղը գրավում ե յերեխայի բնածին թուլությունը: Ցեղ ընդհակառակը. այնտեղ, ուր մանկության պահպանության գծով պլանաչափ պալքար և մղվում յերեխաների համար առողջ կենցաղ ստեղծելու, մահացությունը մարսողական ուղիների հիվանդություններից տարեցտարի պակասում ե:

Լենինգրադի որինակն այդ տեսակետից ցայտուն և և ուսանելի:

Լենինգրադում ընդհանուր մահացությունը նախապատերազմյան շրջանում լեղել է 24, 8 %,

1920 թ. 20, 4

1921 թ. 17, 3

1922 թ. 22, 8

1923 թ. 13, 8

Մահացության տոկոսն ըստ առանձին հիվանդությունների հետեւյալ պատկերն և ներկայացնում.

Տարիներ

1911—13 թ. 20 թ. 21 թ. 23 թ.

Ստամոքսա-աղիքա-

յին հիվանդություններ 84,6 56,4 37,4 28,8

Շնչական ուղին. հիվ. 50,0 31,9 29,6 28,8

Բնածին թուլություն 53,5 73,1 68,0 48,1

Մնացած հիվանդություն. 22,8 21 15 16,3

Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ԾԾԿԵՐՆԵՐԻ ԼՈՒԾԸ

Վարոնք են այն միջոցները, վորոնցով մենք կարող ենք կանխել ծծկերների լուծը, վորոնցով կարող ենք նվազագույն չափերի հասցնել այն:

Դրանք այն գիտական նվաճումներն են, վոր ձեռք ե բերել մարդկային ստեղծագործ ու հետախուզող միտքը յերեխայի առողջապահության բնագավառում:

Այդ նվաճումներից կարեռագույնն այն ըարձրգնահատականն ե, վոր գիտությունը տալիս և կնոջ կաթին իբրև լավագույն սննդի:

կնոջ կաթն իր քիմիական կազմությամբ ամենասարագատ և ամենահարմար սնունդն եւ յերեխայի համար: Մոր կաթը մարսելու համար յերեխայի մարսողական ուղիներից պահանջվում եւ ամենաթեթև աշխատանքը: Նա զերծ եւ վարակից, ստեղծ եւ, մի առավելություն, վորից զուրկ եւ կենդանիների կաթը: Բացի դրանից կնոջ կաթն իր մեջ պարունակում եւ մի շարք կենսաբանական նյութեր, վոր մշակել եւ մայրը և միշտ ել ունի իր արյան մեջ: Այդ նյութերը ուժեղացնում են մանկան դիմադրական ուժը հանդիպ զանազան վարակների, նրան պահում են աշխատյժ, կենսախինող, զվարթ, թովառւն: Այլ կենդանիների կաթի մեջ այդ նյութերը վոչնչանում են, յերբ կաթը յեփում են, իսկ յեթե չեն ել վոչնչանում, ապա նրանք հարազատ չեն:

Այս բոլորից հետո պարզ ե, վոր ծծկեր յերեխային կնոջ կաթով սնուցելն ամենագլխավոր, հիմնական միջոցն ե, վորը ապահովում եւ նրան ամառային լուծից: Այդ տեսակետից մեր մանկական կոնսուլտացիաների առաջնագույն խնդիրը պետք է լինի ամենորյա պլրոպագանդ մղել, վոր մարերը ամենայն լրջությամբ հասկանան կնոջ կաթի նշանակությունը մանկան առողջության համար և լինեն պարտաճանաչ թե իրենց մանկան և թե պետության առաջ:

Լուծի դեմ ունցած կնոջ կաթի կանխարգիլիչ աղղեցությունից ինքնին բղխում են մի շարք հետեւություններ:

Առաջին՝ գարնան վերջին կամ ամառվա սկզբին ծծից չկտրել յերեխային, վորովհետև ամառվա ամիսները ծծկերի համար ամենավտանգավոր շրջանն ե,

մանուկը զրկվում ե իրեն հաբազատ, իրեն սնող և զինող սննդից և սնվում ե արհեստական ոտարածին սննդով, վորի յուրացման համար նրա մարսողական ուղիներն ավելի լարված աշխատանք են կատարում: Ինչ խոսք, վոր ամառվա ամիսներին ծծից կտրելը մեծապես վտանգում ե անպաշտպան մանկան:

Պետք ե մի անգամ ընդմիշտ թողնել այն վնասակար միտքը՝ վորը, մնացել ե մեզ կազիտալիստական կուլտուրայից, «Վտանգավոր ե ինն ամսոից, մի տարուց հետո յերեխային ծիծ տալ». պետք ե ասել, վոր դա գիտական անհեթեթություն ե. յերը 9 ամիսը, մի տարին լրանում ե զարնան կամ ամառվա ամիսներին, պետք ե զարունակել ծիծը մինչև աշնան դովը, մինչև ամառային վտանգավոր սեղոնի վերջը իսկ բնչ անել, յեթե մայրը ծիծ չունի:

Վո՞րաեղից կնոջ կաթ հայթայթել գոնե ամառվա ամիսների համար, լեթե այդ կաթը կանխիչ միջոց ե ամառային լուծի դեմ:

Կուլտուրան միջոց ե ստեղծել և այդպիսի գեղաքերի համար. դա կնոջ կաթի հավաքակայաններն ե: Ամերիկան ունի այդպիսի հավաքակայանների հարուստ ցանց, Գիտական ամերիկունին և իր մանկանն և սնում և մնացած կաթը տալիս ե պետական կաթի կայաններին: Յուրաքանչյուր առողջ մայր կարող ե կաթ արտադրել վոչ միայն իր մանկան, այլև լերկու յերեխայի համար: Այդ ցույց են տալիս կատարված դիտողությունները: Ուրեմն, յեթե մեր մայրերը ցանկանան լինել որինակելի խորհրդային քաղաքացունիներ, այն ժամանակ կաթնակայունը կարող ե ամբարել ահազին քանակությամբ կառջ կաֆ:

Յեթե անցնենք մեր խորհրդային կուլտուրական մեծ քաղաքները, այսուեղ կտեսնենք մի շարք կաթի հավաքակայաններ, հիմնարկություններ, վորոնց պետական նշանակությունը շատ մեծ է:

Մինչև հիմա Հայաստանի մայրաքաղաքը — ել չեմ խռում ուրիշ քաղաքների մասին — դեռ չի կազմակերպել այդպիսի կաթնավին բաղա։ Անհրաժեշտ ե, վոր մեր մայրերն ու հայրերը պահանջ դնեն համապատասխան մարմինների առաջ կաթնահավաքակայան կազմակերպելու գոնե առաջին հերթին Յերեանում։

Ծծկեր յերեխանների սնուցման համար, բացի կնոջ կաթից, վորն ամենակարեորն ե, կան մի շարք այլ սննդանյութեր, վորոնցով կարելի լե հավելյալ կերպով սնել յերեխային։

Այդ ուղղությամբ մեզ մոտ, կլիմայական պայմաններում անպայմանորեն հանձնարարելի յե հետեյալը՝ տաք յեղանակներին պետք ե բոլորովին գուղարեցնել կովի կաթն իրրե հավելյալ սնունդ տարը։ Գետք ե կովի կաթը փոխարինել մածունով, կաթնապուրն ել սպասով։

Այդ տեսակետից գիտությունը գալիս ե հաստատելու և ամբաղնդեկու ժողովրդական դարավոր փորձի արդյունքը — մածունն ու սպասը իրրե թթու կենսամթերքներ։

Բացի այդ, պետք ե խուսափել մինչև աշնանային մրգերի հասնելը՝ ծծկերին գարնանային մրգեր՝ ծիրան, թութ, վարունդ տարուց։

Ծծկեր լերեխայի հավելյալ սննդի հետ կապված մյուս հարցերի շուրջը պետք ե խորհրդակցել կոնսուլտացիայի բժիշկների հետ։

Ալնուհետեւ ծծկեր յերեխային պետք և տրվի նաև
ջուր, թեյ: Ծծկերն ել և ծարավ զգում: Այդ ծարավը
պետք և պլանաշափ կերպով հագեցնել, ջուր տալ
նրան, յերբ և ինչքան նա ցանկանում ե: Քանի վոր
ծծկեր յերեխաների մեջ նյութերի փոխանակությունն
անհամեմատ ավելի արագ ե ընթանում, ուստի և ջրի
կազու նյութերի փոխանակության հետ մեծ և յեզ
կարելոր:

Պետք և յերեխային զով պահել, մաքուր ողում,
սովերում, վորովհետեւ կիզիչ արել նրան գերջերմաց-
նում ե: Գերջերմացնում և նրան և տաք հագուստը:

Գերջերմացումը ճնշում և ծծկեր յերեխային,
թուլացնում նրան և նրա մարսողական ուղիների
ֆունկցիան, և հետեարար, նախապատրաստում և
նրան հիվանդանալու:

Ահապին կաղդուրիչ և թարմացնող աղդեցու-
թյուն ունեն ջրային շփումները, լողացնելը: Դրանց
ջնորհիվ մաշկը մաքրվում ե, գոււրանում նրա ֆունկ-
ցիան—թունավոր, անպետք նյութերի արտադրումը-
ջրային շփուրն յերեխային թարմացնում, աշխուժ և
գարձնում: Մեր վերն ասածներից պարզ և վոր
ամառային լուծը մեծ վտանգ ե ներկայացնում ծծկերի
համար: Հետեապես այդ լուծի դեմ պետք և և կարելի
յե մաքառել:

Գիտական նվաճումները հետևյալ մաքառման
ժիջոցներն են առողջադրել:

Ծծկերների հաւար հարազատ սնունդ և կնոջ
կաթը, վորը և սնունդ և և զենք զանազան վարակ-
ների դեմ կռվելու համար:

Մանկության պահպանության հերթական խըն-

գիրն եւ կազմակերպել մեծաթիվ բնակչության վայրեռում կնոջ կաթի հավաքականներ, նկատի ունենալով այն, վոր կնոջ կաթը լավագույն կանխարգելիչ միջոցն եւ ամառային լուծի դեմ:

Մեր կլիմայական պայմաններում տաք ամիսներին կովի կաթը իրբեկ հավելյալ սնունդ պետք ե արգելել, վորովհետել այդ կաթն ամենից ավելի հեշտ վարակվող, կազմալուծվող սննդանյութն եւ:

Կաթը պետք եւ փոխարիննել բրնձի լեփուկով, 5 ամսականից մեծ ծծկերների համար՝ մածունով՝ իսկ կաթնապուրը՝ սպասով:

Գարնանային պտուղներ՝ ծիրան, թութ, չպիտի առաջ ծծկերներին: Նմանապես պետք եւ խուսափեք գերջերմությունից. պետք եւ յերեխային թեթև հազցընել, արեվի տակ չպահել, այլ պահել հով ստվերում, բաց ողում:

Ծծկերին պետք ե ջուր տալ:


Մաշկն առանձնապես պետք եւ լավ խնամեք ջրային զփուժներով, վաննաներով:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եջ

| | |
|---|----|
| 1. Ի՞նչու յեն ծծկեր յիրեխաները հաճախ հի- | 3 |
| վանդանում | |
| 2. Ի՞նչու յեն ծծկեր լերեխաներն առանձնապես | 5 |
| յենթակա լուծի | |
| 3. Լուծի նախակությունը ծծկերների հասակում | 6 |
| 4. Լուծի պատճառները | 7 |
| 5. Լուծի տեսակները ծծկերների մեջ | 10 |
| 6. Հասարակ լուծ | 10 |
| 7. Թունավոր լուծ | 12 |
| 8. Արյունալուծ կամ դիղենտերիա | 13 |
| 9. Ի՞նչպես կանխել ծծկերների լուծը | 14 |
| 10. Ի՞նչպես կանխել լուծը | 15 |









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0032917

ԳՐԱԴԱՐԱՆ

A E
226



Проф. Габриелян
**Как беречь грудного ребенка от
поноса**

Гиз ССР Армении, Ереван, 1937 г.